«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում.

Դաստիարակ՝ Սարգսյան Ռուզաննա

Մանկապարտեզ՝«Փարաքար համայնքի Այգեկ մանկապարտեզ » ՀՈԱԿ

2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……..……..3-4

ԳԼՈՒԽ 1

Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթականգործընթացում……..……5-8

Գլուխ 2

Ծես՝ որևէ սովորույթ և դրա կատարումն ու կարգը……9-13

ՏՈՆԵՐԻ ԵՎ ԾԵՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ……..……14-16

Ծիսական խաղերի իրականացում……..……15-17

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ……..……18

Տնօրենի եզրակացություն……..19

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ……..……20

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ ……..……..21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մշակույթը չէր պահպանվի և սերնդեսերունդ չէր փոխանցվի, եթե գոյություն չունենային դրան նպաստող որոշակի միջոցներն ու հանգամանքները: Դրանցից կարող ենք առանձնացնել պատմության ընթացքում ձևավորված ծեսերը տոները .

Ծեսը ավանդական, կամ սահմանված կանոններով կատարվող կրոնական արարողություն է, որին հավատացյալները վերագրում են մոգական և խորհրդավոր հատկություններ: Ծեսը լայն տարածում ունի հավատալիքներում, կրոնում, կենցաղում, մարդկային հարաբերություններում և այլուր: Ծեսը խորհրդանշական ձևերով վերարտադրում է նաև ժողովրդի անցյալի կարևոր փուլում կատարված իրադարձությունները և դրանց միջոցով ապահովում ազգի, հասարակության միասնականությունն ու հարատևությունը:

Ծես նշանակում է նվիրում, ընտելացում տվյալ կրոնին և արժեքների համակարգին, ազգությանը, պետությանը: Ծեսերն աչքի են ընկնում իրենց պատմական և ճանաչողական արժեքներով: Դրանք ստեղծվում են ոչ թե պատահական դեպքերի շուրջ, այլ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող իրադարձությունների կապակցությամբ: Ծեսերի շնորհիվ պահպանվել և դարեդար են փոխանցվել ազգային կյանքի բոլոր էական կողմերը, արտացոլել էթնոսին բնորոշ առանձնահատկությունները: Դարերի ընթացքում հարատևած ծեսերի բովանդակությունն իր բազմակողմանի ազդեցությունն է ունեցել այդ էթնոսի առօրյա կյանքի, կենցաղի, հոգեբանության և աշխարհայացքի վրա: Եթե մշակույթի ժառանգորդման առաջին ձևը համարենք ծեսը, ապա երկրորդը ծիսակարգն է: Այն ներառում է ավանդական գործողություններ, որոնք ուղեկցում են մարդուն, հանրությանը կյանքի և գործունեության կարևոր պահերին:

Ծիսակարգը մարմնավորում է մարդկանց վարքի տարբեր կողմերը: Եթե սովորույթը մարմնավորում է ամենօրյա վարքային նորմերը, ապա ծիսակարգին

դիմում են միայն արտակարգ, ոչ ամենօրյա իրավիճակներում (ծնունդ, կնունք, պսակադրություն, մահ, և այլն):

Մշակույթի ժառանգականության փոխանցման մյուս ավանդական ձևը սովորույթն է: Սովորույթը վարքի կարծրատիպացված միջոցն է, որը վերարտադրվում է որոշակի հասարակությունում կամ սոցիալական խմբում և սովորական է նրա անդամների համար: Սովորույթները կենցաղի պահպանված սովորական մասն են, ծեսերի և ծիսակարգերի բեկորները, որոնք կորցրել են իրենց առաջնային նշանակությունը, բայց պահպանել են մարդկանց միավորելու գործառույթն ամենօրյա ընդունված նորմերով: Սովորույթը նաև կենցաղում վարքի կարգավորիչ է, որը աստիճանաբար դարձել է ավանդույթ: Սովորույթի կայունությունը, նրա դիմադրողականությունը, փոփոխություններն այդքան մեծ են այն պատճառով, որ նրանք միշտ ձևավորվում են հասարակությունում և ընդունված են նրա կողմից որպես «ստիպողական պահանջ»:Ի՞նչ է տոնը Տոնը , օրացույցում նշված ժամանակահատված՝ նվիրված ինչ-որ բանի կամ որևէ մեկի պատվին, որն ունի սուրբ (ոչ կենցաղային, միֆական) նշանակություն և կապված է մշակութային կամ կրոնական ավանդույթի հետ: տոնը «մարդկային մշակույթի առաջնային ձևն է»: Տոնի քաղաքակրթական նշանակությունն այն է, որ տոնի միջոցով որոշվում է հասարակությունըհամախմբող արժեքների համակարգը: Տոնը քաղաքակրթության համընդհանուր և ամենակարևոր առանձնահատկությունն է, միևնույն ժամանակ, տոների առանձնահատկությունները արտացոլում են քաղաքակրթությունների միջև եղած տարբերությունները: Տոնի առաջացումը կապված է մարդկության մոտ ժամանակի և օրացույցի հայեցակարգի առաջացման հետ: Ըստ Ժիգուլսկու՝ «ժամանակի հաշվարկը մարդկային մշակույթի ամենամեծ նվաճումներից մեկն է, օրացույցն իր ծագմամբ ամենուրեք հանդես է գալիս որպես տոների և ժամանակաշրջանների կարգավորման, համախմբման և դրանց նախօրոք հաշվարկման ձև»]: Օրացույցի գյուտը կատարվել է այն գիտակցման շնորհիվ, որ ժամանակացույցում կան հատուկ կետեր, որոնք համապատասխանում են բնության ցիկլերի փոփոխությանը կամ հասարակության զարգացման փուլերին: Բախտինը նշում է. «... տոները իրենց պատմական զարգացման բոլոր փուլերում

կապված են եղել բնության, հասարակության և մարդու կյանքի խոշորագույն, բեկումնային պահերի հետ»

ԳԼՈՒԽ 1

Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում

Ծեսն այն միջավայրն է, որտեղ բոլորը, ազգի մշակույթը յուրացրած, ինքնադրսևորվելու, ստեղծագործելու, որոնելու, հայտնաբերելու, երևակայելու, իմացածը կիրառելու լայն հնարավորություն ունեն: Ծեսը, որպես միասնական, բազմաբնույթ, ինտեգրված գործունեություն, նպաստում է նախակրթարան, ընտանիք, համայնք արդյունավետ համագործակցությանը: Ծեսի յուրացման, կրթության, ըմբռնման հիմքը անհրաժեշտ է դնել դեռ վաղ տարիքից՝ այսինքն նախակրթարանից:

Նախադպրոցական տարիքում ծեսի միջոցով սանի զարգացման գործընթացն արդյունավետ է, այն իր մեջ ոչ միայն ներառում է երեխայի համար կարևոր գործունեության ձևերը, այլև իրագործվում է լավագույն ազգային նյութով: Իսկ էկոլոգիական կրթության, որի հիմքը նույնպես դրվում է մանկապարտեզում , նպատակը վաղ տարիքից բնության հետ երեխայի միավորումն է, բնության հանդեպ պատասխանատու հոգատար վերաբերմունքի ձևավորումը:

էկոլոգիական դաստիարակության նպատակն է երեխային տալ ճանաչողական, բնապահպանական տարրական գիտելիքներ, ձևավորել էկոլոգիական գիտակցությունը, բնության, շրջակա միջավայրի նկատմամբ հոգատար վերաբերմունք: Բնության մեջ ապրող երեխան ճարպիկ է, գործունյա, անվախ, ուժեղ, խելացի, սրամիտ, համարձակ և այլն, որովհետև միայն այդպիսի հատկություններ ունեցողը կարող է ոչ միայն գոյատևել այդ միջավայրում, այլև լիարժեք անդամը լինել,

էկոլոգիական դաստիարակությունը կրթության էական բաղադրիչն է, հատկապես 21-րդ դարում, քանի որ մարդկության անհեռատես գործունեության արդյունքում հասարակությունը և մոլորակը կանգնած են աղետի առաջ: Ուստի էկոլոգիական կրթությունը և էկոլոգիական գիտակցության ձևավորումը պետք է սկսել վաղ տարիքից:

Նախադպրոցական տարիքի երեխայի զարգացման մեջ կարևոր դեր պետք է գրավի բնագիտական և էկոլոգիական դաստիարակությունը: Բնության նկատմամբ վերաբերմունքը, էկոլոգիական պատկերացումները ենթադրում են. ծանոթացնել երեխաներին բնության հետ, սովորեցնել շրջակա միջավայրի խնամքի կարևորությունը և կանոնները, հոգատարություն սերմանել շրջակա միջավայրի՝ ծառերի, խոտերի, կենդանիների և բնության մաս կազմող յուրաքանչյուր տարրի նկատմամբ: Ամբողջ քրիստոնյա աշխարհում Զատիկը համարվում է Քրիստոսի հարության տոնը: Զատիկ անվանումն առաջացել է զատել բառից, որը նշանակում է զատվել և հեռանալ մեղքերից: Այն համարվում է եկեղեցական 5 տաղավար

տոներից մեկը և այս օրն ամբողջ քրիստոնյա աշխարհը տոնում է Քրիստոսի հարությունը, իրար հայտնելով ավետիսը՝ «Քրիստոս հարյավ ի մեռելոց» և ի պատասխան ստանալով՝ «Օրհնյալ է հարությունը Քրիստոսի»:

Սակայն հայոց աշխարհում զատկի տոնի արմատները շատ ավելի հին են: Զատիկը հնում համարվում էր գարնանացանի տոնը և նվիրված էր Անահիտ դիցուհուն, ով էլ հովանավորում էր մայր հողի բեղմնավորումը:

Զատիկն ծագում է զատել բառից, քանի որ հենց Անահիտն էր, որ միմյանցից զատում էր բնության գույները: Ըստ ավանդության, երբ ջրհեղեղից հետո Արացիները բնակություն հաստատեցին Արարատյան դաշտում, նրանք նկատեցին, որ ծիլ ու ծաղկունքն ամբողջությամբ գորշությամբ է պատված: Եվ Արիների նահապետ Մանը զոհեր է մատուցում Անահիտ աստվածուհուն՝ խնդրելով նրան, որպեսզի վանի գորշությունն ու իրենց վերադարձնի բնության հազարավոր գույները: Սակայն Անահիտը պատասխանում է, որ բնության գույները կարող է վերադարձնել միայն Հազարան հավքը, որը դյութիչ ձայնով երգում է և գույնզգույն ձվեր ածում, որով և նորոգվում են բնության գույները: Բայց այժմ հավքը պահվում է ստորգետնյա թագավորությունում, և Մանը պետք է ազատի և վեադարձնի նրան:

Մանը վերադառնում է Արարատ Հազարան հավքի հետ: Նա հավքին դնում է գետնին, և հավքը սկսում է երգել՝ բազմաթիվ գույներ ճառագելով և գույնզգույն ձվեր ածելով: Այնուհետև Անահիտը, գալով Արարատ, հավաքում է գույնզգույն ձվերը և շաղ տալիս ողջ դաշտով մեկ: Իսկ այնուհետև պատվիրում է հավքին բույն դնել Արարատ լեռան վրա և մշտապես գույներ տարածել երկրի վրա:

Եվ այդ օրվանից Արիները սկսում են ուրախ վարել և ցանել հողը, իսկ մանուկները, ջահել հարսներն ու աղջիկները մինչև ուշ երեկո երգում, պարում ու ձվախաղ են խաղում:

Ի տարբերություն քրիստոնյաների, ովքեր զատկի ձվերը ներկում են մուգ կարմիր գույնով (Քրիստոսի թափած արյան գույնը), Արիացիները զատիկի ձվերը ներկում էին բոլոր հնարավոր գույներով: Նրանց համար զատկի տոնի իմաստը կյանքի վերածնունդը և բնության գարնանային զարթոնքը տոնելու մեջ էր:

Վարդավառ

Վարդավառը քրիստոնյա աշխարհում տարածված է, որպես Քրիստոսի պայծառակերպության օր, որը նշվում է Քրիստոսի հարությունից հետո 98-րդ օրը: Տոնի ժամանակ ժողովրդական սովորույթներից է միմյանց վրա ջուր ցողելն ու աղավնիներ բաց թողնելը, որոնք խորհրդանշում են ջրհեղեղը, Նոյի ընտանիքի փրկությունը և Նոյի աղավնուն:

Հեթանոսական շրջանում Վարդավառ տոնը նվիրված է եղել Աստղիկին: Աստղիկը հայոց դիցարանում համարվում էր սիրո և գեղեցկության աստվածուհին, ինչպես նաև ամպրոպի աստված Վահագնի սիրեցյալը:

Ըստ ավանդազրույցի՝ Աստղիկը ծնվել է ծովի փրփուրներից և որտեղ որ քայլում էր, նրա ոտքերից կաթկթացող արյան հետքերի տեղում վարդեր էին բուսնում: Ատղիկ աստվածուհին նաև երկնքից վարդեր շաղ տալով հայ աղջիկներին օժտում

էր աստվածային գեղեցկությամբ: Վարդավառը հայոց աշխարհում ամենասիրելի տոներից մեկն էր և տոնվում էր մեծ շուքով: Այդ օրը բոլորը միմյանց վրա ջուր էին ցանում և իրար սեր ու գեղեցկություն տալիս: Տոնի ընթացքում նրանք փառաբանում էին Աստղիկին և միմյանց նվիրում տոնի խորհրդանիշը՝ վարդը:

Ըստ արիական ավանդույթներից մեկի՝ ստորգետնյա աստվածն առևանգում է Աստղիկին, որի հետևանքով արիների միջից վերանում են սերն ու գեղեցկությունը, և նրանց հոգիներում բույն է դնում ատելությունը: Բոլորը դառնում են տգեղ ու անգութ: Բայց Վահագնը, հաղթելով հրեշին, ազատում է Աստղիկին և, շրջելով Հայոց աշխարհով, արիներին օծում է վարդաջրով, վարդավառ է սարքում և նրանց վերստին օժտում աստղիկյան սիրառատությամբ:

Հնում մարդիկ Վարդավառը նշել են հիմնականում գետերի աղբյուրների կամ լճերի ափին՝ այնտեղ, որտեղ ջուրն առատ է եղել: Վարդավառը նաև համարվել էր ջրի տարերքի պաշտամունքի տոն: Հայերի մեջ տարածված են ջրի և անձրևաբերության հետ կապված բազմաթիվ ծեսեր: Ջուրն ասոցացվել է նաև կապույտ գույնի հետ, որը և՛ պարզություն, և՛ մաքրություն է խորհրդանշում: Համաձայն շումերական աղբյուրների, հայերը Հայա տիեզերական ջրերի և իմաստության աստծո որդիներն են, և ըստ «Սասնա ծռեր» էպոսի՝ հայերը պաշտել են ջուրը և իրենց համարել ջրից ստեղծված (Սանասար և Բաղդասար):

Վարդավառը համարվում է նաև խնձորի տոնը: Ընդունված սովորություն կար, որ մինչև Վարդավառ խնձոր չէին ուտում: Եվ Վարդավառին՝ խնձորի բերքի օրհնությունից հետո, նոր կարելի էր բերքը հավաքել և օգտագործել:

Տրնդեզ

Հայ առաքելական եկեղեցին ամեն տարի՝ Քրիստոսի ծնունդից 40 օր հետո նշում է Տյառնընդառաջը: Տյառնընդառաջի տոնը համարվում է Տիրոջն ընդառաջ գնալու հրավեր բոլորի համար:

Հնում տրնդեզը կրակին նվիրված տոն է եղել: Ըստ հին հայկական պատկերացումների՝ տրնդեզի վառվող կրակի բոցերն ավելի էին ջերմացնում արևին և այդպիսով մեղմում էին ցուրտը և արագացնում գարնան գալուստը: Քանի որ հայերն իրենց համարում էին Արևի որդիներ, նրանք պաշտում էին նաև արևի երկրային տեսակը՝ կրակը: Տոնի ժամանակ կրակի վրայով թռչելով՝ մեր նախնիները հաղորդակցվել են բնության տարրերի հետ: Ըստ որոշ մեկնաբանությունների՝ տրնդեզ բառը նշանակում է դիզված կրակ:

Հեթանոսական շրջանում Տյառնընդառաջի ծխի ուղղությամբ մարդիկ կատարել են գուշակություններ: Ծխի միջոցով մարդիկ գուշակել են տարվա բերքառատությունը: Ծխի ուղղությամբ նաև փորձել են գուշակել՝ որտեղից է գալու հարսնացուն կամ փեսացուն: Տրնդեզի կրակը վառել են հիմնականում ցորենի հասկերից: Կրակի վառվելու ընթացքում կանայք սկուտեղի վրա բերում էին Տյառնընդառաջի տոնական կերակրատեսակները՝ փոխինձը, չամիչը, աղանձը, ընկույզը, բոված սիսեռը և պտտեցնում կրակի շուրջ, իսկ դրա որոշ մասը շաղ տալիս կրակի վրա: Այնուհետև, երբ կրակի բոցն արդեն թուլանում էր, սկսում էին թռչել կրակի վրայով: Եթե կրակի վրայից թռչելիս փեշը անզգուշությամբ վառվում էր, դա համարվում էր հաջողության նշան:

Մուսալեռան բնակիչների մեջ տարածված է եղել նաև մի սովորություն, որ տանտիկինը Տյառնընդառաջի ժամանակ բացում էր տան դուռն ու պատուհանը, դուրս էր քշում ձմեռը և ներս էր հրավիրում գարունը:
Ըստ Ս. Գրիգոր Տաթևացու՝ կրակն ունի հետևյալ խորհուրդները. «Խարույկի հուրը բորբոքելով՝ քրիստոնյաներն Աստծո սիրո հուրն են խնդրում, և կրակը ծառայեցնում են Աստծուն»:

Ծաղկազարդ

Զատկի տոնից մեկ շաբաթ առաջ Հայ Առաքելական եկեղեցին նշում է Ծաղկազարդը: Այն խորհրդանշում է Քրիստոսի մուտքը Երուսաղեմ: Տոնի ժամանակ բացվում է եկեղեցու խորանը և մարդիկ եկեղեցուց օրհնված ուռենու կամ ձիթենու ճյուղեր են տանում տուն, որոնք էլ համարվում են չարխափան: Մարդիկ այդ ճյուղերը պահում էին տանը կամ ամբարներում, որպեսզի տարին առատ ու բարիքով լի լիներ և հիվանդությունները վերանային:

Սակայն, դեռևս հեթանոսական ժամանակներից մարդիկ տոնել են Ծառզարդարը, որը նվիրված է եղել ծառի պաշտամունքին: Այն հնում կապված է եղել բնության զարթոնքի, գարնան գալստյան և մեռնող և հարություն առնող բնության աստվածության հետ՝ Արա Գեղեցիկի հովանավորչությամբ: Հնում հայ ժողովրդի մեջ եղել է որոշ ծառերի պաշտամունք, ինչպիսիք էն՝ ուռենին, սոսին, խնկենին, կաղնին, որոնք ունեցել են տիեզերքի հավերժականության, պտղաբերության և կենաց ծառի խորհուրդ:
Հնագույն շրջանում ծառզարդարի տոնի ժամանակ սրբազան և խորհրդանշական ծառը զարդարել են գույնզգույն շորի պատառիկներով և տարբեր պտուղներով: Որոշ շրջաններում ծառերը զարդարել են ձվերով, ինչն էլ ունեցել է չարխափան նշանակություն:

Հնում ծառզարդարի տոնի ժամանակ էր կատարվում նաև անձրևաբերության ծեսը, որը կատարվում էր Նուրի տիկնիկների միջոցով: Աղջիկները պատրաստում էին տիկնիկը, այն պտտեցնում տնետուն՝ խնդրելով Նուրիին անձրև պարգևել չորացած հողին: Կա նաև կարծիք, որ տիկնիկը խորհրդանշում է ջրի՝ Նարե աստվածուհուն, և ծառզարադարի տոնն էլ հենց նվիրված է եղել նրա պաշտամունքին, քանի որ ջուրն այն կենսական տարրն է, առանց որի բնությունը չի կարող կենդանություն առնել:

Գլուխ 2

Ծես՝ որևէ սովորույթ և դրա կատարումն ու կարգը:

Ընդհանրապես ավանդաբար եկող սովորություն՝ սովորույթ:

Տոնը մարդուն (լայն առումով) ուղեկցում է իր կյանքի ողջ ընթացքում, և հենց այդ ժամանակահատվածում էլ ձևավորվում, զարգանում և սովորույթի ուժ է ստանում: Այս առումով մեծ է միջավայրի, հասարակական կարծիքի, տեսանկյան, գործող արժեհամակարգի դերը, որոնց ճշգրտումով էլ միայն հնարավոր է առաջ շարժվել:Բուն տոնն արդեն իսկ ուրախություն է, ցնծություն, դժվարությունը անցնելիք ճանապարհի ճիշտ ընտրությունն է:

Քանի որ իմաստային, խորհրդաբանական շերտն էլ բավականաչափ բազմազան է, այս գործին լծվելուց առաջ լավ է ծանոթանալ, ուսումնասիրել, ինքնակրթվել և նոր միայն ազատորեն և անկաշկանդ առաջ գնալ:

Ծեսի մեջ ներառված տարրերից անփոփոխ է միայն բուն խորհրդաբանական շերտը:

Հեշտ է ենթադրել, որ ազգերի, մարդկության «կյանքի» ընթացքում որոշ ծեսեր մոռացվում են, նորերն են ստեղծվում, եղածները փոփոխվում են՝ անպայման ազդվելով ժամանակաշրջանի կենսափիլիսոփայությունից, սոցիալական իրավիճակից, հավատալիքներից, սովորույթներից: Հետևապես՝ ծեսը ժամանակի կրողն է ու ինչ-որ տեղ մարդու գործունեությունը կարգավորող ֆունկցիա ունի: Եթե ամեն սերունդ ծեսին իր կյանքից մի բան չավելացնի, այն աստիճանաբար կմարի:

Ծեսի իրականացնումը ինքը ծես է՝ կրթական ծես, որի իրագործումը կրթական գործընթացում կրթություն է կյանքով: Ծեսի իրականացումը անարդյունավետ ու ինքնանպատակ կլինի, եթե այն չկապվի սովորողի կենսագործունեության, նրա առօրյայի, կրթական իրական պահանջների հետ, կրթական խնդիրներ չլուծի:

Ուսումնական հաստատություններում, ինչպես և իրական կյանքում, ծիսական գործունեությունը որոշակի փուլեր է ենթադրում՝

- ծեսի նախապատրաստում
- ծիսակատարություն:

Ծիսակատարությունը ծեսի նախապատրաստական փուլում սովորողների գործունեության, դրսևորումների ամփոփումն է:

Ծեսերն այսօր մենք իրականացնում ենք որպես գործունեության ձև, որով երեխան ապրում է՝ խաղում է, երգում, պարում, ընկալում ու ճանաչում: Նախակրթարանում, առաջին, երկրորդ դասարաններում երեխան ծեսն ընկալում է իր երգած երգի, իր պարած պարի, իր ձեռքով պատրաստած ծիսական ուտելիքի, իրի, իր խաղացած խաղի կերպով: Ավելի մեծ տարիքում տնին ավելանում է հետազոտական աշխատանքը:

Նախքան ծեսի նախապատրաստությունը խումբը աշխատանքային նախագիծ է կազմում: Մենք պատահաբար չգործածեցինք խումբ բառը: Ծեսը դասարանական տոն չէ, համայնքային տոն է: Հետևապես նախատոնական աշխատանքները տարբեր դասարանների սովորողներ կարող են միասին կատարել: Սովորաբար դա այդպես էլ ստացվում է, քանի որ կատարվող խմբային աշխատանքները ընդհանուր, համատեղ, հաճախոչ դասարանային գործունեություն են ենթադրում: Ծեսի իրականացման ընթացքի ճիշտ կազմակերպման դաքում լուծվում են կրթական շատ խնդիրներ և ծեսը դառնում է հանրակրթության բաղկացուցիչ:

Ծեսի խորհուրդն ու պատմությունը

Կարևոր աշխատանք է ծեսի մասին տեղեկատվության հավաքումը:

Համեմատաբար փոքրերը կարող են մանկական բանահավաքություն կատարել. մեծերից օրհնանքներ, խաղիկներ, հաշվերգեր, ասույթներ սովորել, եթե կարող են, նաև՝ գրի առնել, պարզել, թե ինչ սովորույթներ են եղել, որոնք են պահպանվել, դասարանում ներկայացնել դրանք:

Ծեսի ուսումնասիրման հետ կապված՝ 5-6-րդ դասարանների սովորողներին հիմնականում հետաքրքրում են՝

- այս կամ այն ծեսի հեթանոսական շերտերը.
- այս կամ այն ծեսի քրիստոնեական շերտերը.
- այս կամ այն ծեսը ինչպես են նշում այլ ժողովուրդները:

Սովորողները ուսուցիչների հետ տարբեր աղբյուներից ինֆորմացիա են հավաքում մոտեցող ծեսի, նրա խորհրդի, պարագաների, սովորույթների, ծեսի հետ կապված իրական և դիցաբանական կերպարների մասին, ավանդություններ և բանահյուսական այլ նյութեր գտնում, կարող են բանահավաքություն անել և այլն:

Ուսումնասիրում են այլ ազգերի համանման ծեսերը: Այս ընթացքում նրանք՝

- օգտվում են ինտերնետից,
- թարգմանություններ են կատարում,
- կարդում են համապատասխան գրականություն,
- աշխատում մեծահասակների հետ:

Կարող են մեծահասակներից գրի են առնել, թե նրանք ինչպես են իրականացրել ծեսը, մեր օրերում իրականացվող ծեսը համեմատել նրանց պատմածների, նախորդ դարերի նկարագրությունների հետ, համեմատություններ կատարել, եզրակացություններ անել, զարգացնել ծեսը՝ ժամանակակից տարրեր ներմուծելով: Ծեսի, նրա տարրերի, նրանում արտացոլված հավատալիքների մասին էլեկտրոնային տեղեկատվական նյութ են պատրաստում:

Փոքրիկ հետազոտական նախագծեր են իրականացնում:

Այդ ընթացքում նաև ծեսն են յուրացնում: Հասկանալով ծեսի էությունը՝ դժվար չէ ժամանակակից մարդու կյանքում ևս գտնել ծեսեր, որոնք մենք որպես այդպիսին գուցե չենք էլ ընկալում: Այդպիսիք դժվար չէ գտնել նաև կյանքում, ու սովորողները ուսուցիչների հետ կարող են իրենց գործունեության որոշ ձևեր մշակված ծեսի վերածել, ասենք՝ գարնանային աշխատանքները, ուսումնական որոշ նյութերի ուսումնասիրությունը, երեխայի որոշ ավանդույթներ՝ ուսումնական տարվա սկիզբ, ավարտ, վերջին զանգ, մեր օրերում ձևավորված տոներ...

Նրանք ոչ միայն հետազոտական, ստեղծական աշխատանք են կատարում, այլև դառնում են իրենց գործունեության նախագծողն ու իրականացնողը: Միաժամանակ ինքնուրույն, որոշումներ կայացնող և դրանք իրականացնող, պատասխանատու մարդ է ձևավորվում:

Լեզվագործունեությունը ծեսից հպստանպ ու և ծեսն հպստացնել ու միջոց

Դժվար է գտնել ավելի հարուստ, կոլորիտով, երաժշտական, բազմաբովանդակ լեզվական նյութ, քան ծիսական բանահյուսությունն է: Նրանում եղած լեզվական կառույցները, չափերը, ռիթմերը, բառաձևերը, համեմատությունները, պատկերները

երեխայի լեզվամտածողության, լեզվազգացողության զարգացման համար անփոխարինելի են: Սովորողները դասավանդողի հետ տեղեկատու գրականությունից, ինչպես նաև՝ համացանցից, տատիկ-պապիկներից, այլ աբյուրներից փնտրում-գտնում են ծիսական զանազան ստեղծագործություններ, իսկ հետո՝ բանավոր կամ իրենց պատրաստած տեսանյութերի միջոցով դրանք փոխանցում են ընկերներին:

Դրանք յուրացնելով՝ սովորողները իրենք են ստեղծում նմուշեր, որոնք ոչ միայն նրանց ուսումնական գործունեության արդյունք են, այլև ուսումնական նյութ են դառնում իրեն ընկերների համար: Ստացվում են, որ նրանք փոխանակում են իրենց հմտությունները, ձեռք բերած փորձը: Նրանց հորինած հանելուկներն ու ասույթները, օրհնանքներն ու խաղիկները, գովքերն ու ավանդությունները դառնում են ընդհանուրինը, դառնում են ուսումնական նյութ, միաժամանակ հարստացնում են այդ խմբի ծեսի լեզվական պաշարը:

Տեխնոլոգիան ծիսական գործունեության բաղկացուցիչ

Ծիսական իրերի պատրաստումը տեխնոլոգիական գործընթաց է, որը զարգացնում է երեխայի ստեղծագործական երևակայությունը, ճաշակը, մտածողությունը: Նամի շատ հմտություններ է ձեռք բերում:

Կարևորում ենք ծիսական պատգամների, հագուստի նոր՝ ժամանակակից տարբերակներ մշակումը, դրանք ժամանակակից նյութերով, տարբեր թափոններով պատրաստելը: Կարևոր է նաև, որ ստեղծված պատգամ ֆունկցիոնալ լինի և չդառնա փոշոտվող հերթական նմուշ: Խումբը տարբեր թափոններից զարդաձևաղբման կամ այլ նպատակների համար տուփ է պատրաստում կամ արել է թիլենայինշերով, տարբեր ոչ պտանի տարբեր լարերով ալլատիզ ու այլ տիկնիկներ է պատրաստում և կախում առաստաղից: Կարող են չորացած ճյուղերով կախարդական զարդաձառեր պատրաստել, մոմլաթե տարակներով տարբեր կերպարներ և իրեր ստանալ, որոնք կօգտագործեն առօրյայում: Կամ էլ կարող են փայտե և այլ թափոններից զանազան շրիվաններ պատրաստել: Տոնը խորհրդանշող կամ այլ նպատերով կավե բաժակներ ու այլ իրեր կարող են պատրաստել: Պետք է միտքն աշխատի, մտածողությունը դուրս գա սովորականի սահմաններից, ստեղծագործական երևակայությունն ակտիվանա զարգանա: Հագուստի պատգամները ևս կարող են թափոններից պատրաստվել, հետաքրքիր ույուրահատուկ լինել: Ճաշակի, մտքի, կոկիկության առկայության դեպքում ներկված տարբեր չափերի բանկաներն ու շշերը, մոմլաթը, հին կոճակները, ուլունքները, հովանոցները, հողաթափերը...այս ցուցակը հակարել է շարունակել), կարող են հաջողությամբ լրացներ հագուստը և տոնն ավելի գունագեղ ու հետաքրքիր դարձնել:

Ծիսական բացիկներն ու հրավիրատոմսերը ևս կարող են բազմազան ու անսովոր լինել ոչ միայն ձևով, այլև բովանդակությամբ:

Շատկարևոր է, որ ծեսի բերած գիտելիքը չդառնաինքնանպատակ, այլ կերպասած՝ չմնա պասիվ գիտելիք, այլ լինի շարունակական, անընդհատ ու անընդմեջ:

Ծեսի հետ կապված արարողությունները լաբորատոր և բնագիտական գործունեությունն և էկոլոգիական դաստիարակությունն

Հանրակրթության ընթացքում իրականացվող գործունեության մի շարք ձևեր դառնում են ծոսի բաղկացուցիչ: Մի դեպքում դակարող է ծառատունկ

կամ ծաղկաունկ լինել (Ծառզարդար, Զարիկ, կանանց տոն) , մի այլ դեպքում՝ ծեսի հետ կապված պաշտամունքային նյութերի հատկությունների հայտնաբերում փորձերի և արտողական այլ միջոցներով(Վարդավառ,Համբարձում,գարնանացան,Ամանոր,Տրնդեզ): Մի այլ դեպքում սենյակային կամ այլ բույսերի աճեցում կարող է լինել (կանանց տոն, ուստրվա սկիզբ): Խոհանոցում ծիսական ուտելիք-կերակուրների պատրաստումը, որ հատուկ է համարյա բոլոր տոներին, իսկական բնական,լաբորատոր գործունեություն է:

Մարմնակրթություն և ծես

Մի շարք ծեսեր հատուկ արարողություններ ունեն, որոնք կապված են հեն մարդու օրգանիզմի, նրա կենսագործունեության առանձնահատկությունների, ֆիզիկական զարգացման հետ՝մեծ և փոքր պասեր, մարզական հատուկ խաղեր՝գոմշակռիվ, աքլորակռիվ, ուղտխաղացնոցի: Բացի այդ ծեսերի ծամանակ նախակրթարանների և սաները ազգային մանկական խաղեր են սովորում և խաղում. դա անպայմանորեն մտնում է բոլոր ծիսական ծրագրերի մեջ:

- Երգ-պար-ծես

Կարծում ենք՝ այս մասին բացառություններ տալն ավելորդ է, որովհետև ամեն ինչ շատ ակնհայտ է ու հասկանալի:

Օտար լեզվի ուսուցում այլոց ծեսերի միջոցով

Ծիսական նյութերի թարգմանությունները, այլ ազգերի ծեսերի ուսումնասիրությունները օտար լեզվի արդյունավետ ուսուցման և դրա կիրառման միջոց է:

Ծնողական կրթություն ծեսի միջոցով

Շատ կարևոր է ծնողի մասնակցությունը իր երեխայի ծիսական գործունեությանը: Ծեսը ծնողին համեմատաբար հասկանալի իրողություն է,նրաակտիվ մասնակցությունը դրան ավելի դյուրին է, քան

որևէ այլ արտողության: Նա պատրաստ է մասնակցել ծիսական բոլոր արարողություններին, որովհետև կենցաղում ինքը դրա կարիքն ունի, որովհետևինքը դակիրառում է,բայց նյութին չի տիրապետում,որովհետև ծնողի համար ծեսը նաև կապ է իր նախնիների ու անցյալի հետ Նա սովորում է իր երեխայի սովորած երգերն ու պարերը,նրահետեփում է ծիսական կերակուրները՝միաժամանակ մասնակից դառնալով իր երեխայի ուսումնական գործընթացին:

Մտածողություն և ծես

Մենք շատկարևորում ենք ծեսի նորացումը,թարմացումը:Կյանքը ինքն է ծեսը փոխում,հարմարեցնում ժամանակի կենսապայմաններին,ժամանակի նորամուծություններին,և մենք համամիտ ենք այն մտքի հետ,որ ծեսը պետք է անփոփոխ պահել: Նախ՝դա անհնար է, և ինքը ծեսը անփոփոխությունից կմեռնի, ինչպես կյանքն է մեռնում անշարժությունից:Շատկարևոր է,որ սովորողները այնքան հմուտ լինեն, այնքան ազատ ու ճկուն կարողանան մտածել, որ կարողանան տոնը,ծեսը ավելի հասկանալի,ավելի թեթև ու իրական դարձնեն՝պահպանելով ծեսի խորհուրդը, բանահյուսական նյութը: Սա ոչ միայն կնպաստի ծեսի կենսունակությանը, այլև կխթանի սովորողների ազատ գործնական, ստեղծագործական մտածողության զարգացումը,որ պակաս կարևոր չէ,քան ուսումնական որևէ այլ ինդիր:

Նոր ծեսերի ծնունդը նոր մտածողության արդյունք

Որքան էլ կարևոր են հնուց փոխանցված ծեսերն ու ավանդույթները, դրանց նորացումն ու, առավել ևս, նորերի ստեղծումը պակաս կարևոր չեն: Մեր կյանքում շատ գեղեցիկ, հետաքրքիր արարողություններ ճշտման, մաքրման, կանոնակարգման կարիք ունեն: Հաճախ դրանք այլասերվում են ժամանակակից բարքերի, պատասխանատու անձանց անտարբերության կամ անկարողության պատճառով՝ վերջին զանգ, կանանց տոներ, գարնանային տոներ, ուսուցչի օր, տառաճանաչության տոն: Կան նաև սովորողների գործունեության ձևեր, որոնք ինքնաբերաբար ծեսի են վերածվել, բայց դեռ չեն ծիսականացվել՝ տարբեր սպորտլանդիաներ, ստուգատեսներ:

Եթե սովորողներն ու նրանց շրջապատի մեծերը ազատ, ստեղծագործ մարդիկ են, ապա նրանց համատեղ գործունեության արդյունքում կարող են նոր, ոչ պակաս գեղեցիկ ծեսեր ծնվել, որոնք նույնպես կդառնան հանրակրթության բաղկացուցիչներ:

Ծիսական պակների ստեղծում

Որպես ծեսի իրականացման արդյունք սովորողները կարող են ստեղծել ծիսական պակներ (էլեկտրոնային տարբերակով), որտեղ ներկայացված կլինի ծեսն ամբողջովին, այն բանահյուսական նյութը, պարագաները, որոնք օգտագործվում են ծեսի ժամանակ, ծեսի հեթանոսական և քրիստոնեական հիմքերը, եթե դրանք կան, ծեսի իրենց իրականացման ընթացքը, իրենց դիտարկումները, իրենց նորամուծությունները, առաջարկները: Այս պակները կարող են ուղղորդող ուսումնական նյութեր լինել:

Ուզում ենք ավելացնել, որ ծեսը կարելի է և պետք է դիտարկել ոչ միայն հոգևոր և կրթական դաստիարակության, այլ նաև բարոյական արժեքների և էկոլոգիական դաստիարակության տեսանկյունից: Երեխան, որը Ճառզարդարի տնին պարտավել իս՝ ծառ, ծաղիկ կամ թուփ է տնկում, ջրում է ու խնամում, ծառին գովաբանում է ու քնքուշ խոսքեր ասում, հազիվ թե ուրիշի տնկած ծառը կոտրի: Արդյունքում շահում է և ուսուցիչը, և սովորողը, իսկ վերջին հաշվով՝հասարակությունն ու պետությունը, որն այսօր հենց այսպիսի քաղաքացու կրթական պահանջներ է տվել (Տե՛ս Կրթակարգի «Շրջանավարտին ներկայացվող պահանջներ» բաժինը):

Ծեսը՝ հանրակրթության բաղկացուցիչ

Ուսումնական գործընթացի ցանկացած խնդրի լուծում կարելի է իրագործել ծեսի իրականացման ընթացքում, որովհետև այն մարդու կյանքի մի մասն է, դրա տարբեր կողմերի արտացոլումը՝ իր եփ ու թափով, հաց ու կապով, հոգս ու հաշվարկով, երգ ու պարով, տոնով ու տաղավարով:

ՏՈՆԵՐԻ ԵՎ ԾԵՍԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Նախադպրոցական տարիքի երեխայի ներդաշնակ հոգևոր զարգացման կարևոր խնդիրներից մեկը ազգային մշակույթի յուրացումն է՝ծեսեր, տոներ, որտեղ նրանք դառնում են այս ամենը կրողը ու ակտիվ փոխանցողը: Նախադպրոցական տարիքի երեխայի խոսքի զարգացումը ծեսերի,տոների իրագործման ընթացքում տեղի է ունենում բնական, հաղորդակցական միջավայրում և մթնոլորտում: Ծեսի կազմակերպման ընթացքում երեխան խոսում և շփվում է հասակակիցների,մեծահասակների հետ, և սխալ կլինի մտածել, թե.երեխայի խոսքը կարելի է զարգացնել միայն խոսքի զարգացման հատուկ պարապմունքների ժամանակ, կամ երբ հատուկ ուշադրություն ենք դարձնում նրա խոսքին: Նախադպրոցական կրթության մեջ ծեսերի կարևորության առանձնահատկություններից մեկն է լայն է , որ երեխայի անձի զարգացման բոլոր ոլորտները զուգահեռ զարգանում են ծեսին նախապատրաստվելու և այն իրագործելու գործունեության ընթացքում:Երեխաները ծեսի կազմակերպման ընթացքում շփվում և հաղորդակցվում են: Նրանք յուրովի նախագծում են իրենց անելիքը, քննարկում ընկերների հետ: Ծեսի կազմակերպման ընթացքում դաստիարակը ծեսի ու գործողությունների մասին անհրաժեշտ տեղեկություն է հաղորդում:Երեխաները պատմում են իրենց իմացածը և դրան ավելացնում նորը: Երեխան իր գործունեության բոլոր տեսակների զուգահեռ խոսում է, պատմում, թե ինչ է անում, կարծիք հայտնում, նկարագրում, հարց տալիս ու պատասխանում հարցերի: Այս ամենը բնականաբար, խոսքի զարգացման հատուկ պարապմունքներից ոչ պակաս նպաստում է երեխայի խոսքային կարողությունների զարգացմանը: Նախ նշենք, երեխան ավելի շատ սովորում է լսածը գործողության վերածելով, քան մենակ լսելով:Այդ իսկ պատճառով ծեսերի և տոների իրագործումը երեխաների մասնակցությամբ շատ արդյունավետ միջոց է այդ ամենին հասնելու համար, քանի որ ծեսերի կազմակերպումը ամբողջությամբ խաղ է և գործողությունների շարան:

Ներկայացնենք, թե ծիսական գործողությունները ինչպես են ազդում երեխայի խոսքի, ինչպես նաև խոսքին նպաստող մյուս ոլորտների՝ սոցիալական, հուզական, մտավոր զարգացման վրա: Շատ կարևոր է երեխային ներգրավել ծեսի նախապատրաստական աշխատանքներին: Այդ նախապատրաստական աշխատանքները հիմնականում ծիսական պարագաների պատրաստումն է: Այս գործողության ընթացքում երեխաները հնարավորություն են ունենում նկարելու, ներկելու, կտրելու և տարբեր նյութերից ծիսական պարագաներ պատրաստելու: Այս

ընթացքում երեխաները խոսում են ծեսի մասին: Նրանք իրենց երևակայությամբ կարող են հորինել ու ավելացնելնոր դրվագներ, պատմել ու ավելացնել (այսինքն խաղալ) այն ինչ իր հենց հոգուն ու միջավայրին է հարազատ: Հենց այն ամենը շատ մեծ ազդեցությունէ թողնում երեխայի խոսքիննպ աստող՝ սոցիալական, հուզական և մտավորզարգացման վրա:

Ծիսական խաղերի իրականացում

Ինչպես գիտենք խաղը երեխայի խոսքի զարգացման ամենակարևոր միջոցն է: Ծեսերի ամբողջական իրականացումը ինքնին կարելի է համարել խաղ, սակայն մենք ունենք պարզ ու գեղեցկ ծիսական խաղեր, որոնց իրականացման միջոցով կարելի է ունենալ մեծ արդյունք՝ երեխայի զարգացման հարցում: Ծեսն այն միջավայրն է, որը երեխային տալիս է հնարավորություն խաղալ ազատ կամ ունենալ դերային խաղեր:

Ազատ խաղը երեխային տալիս է ինքնադրսևորվելու հնարավորություն: Ծեսի ընթացքում դերային խաղը օգնում է երեխային յուրացնել ծանոթ ու անծանոթ երևույթները, հասկանալ դրանց դերն ու նշանակությունը, իրենց վրա որոշակի պատասխանատվություն վերցնել, նոր տեղեկություններ ստանալ ու զարգացնել ունեցած հմտությունները: Ծիսական ու մանկական խաղերը ազդում են երեխայի խոսքին նպաստողմյուս ոլորտների՝ սոցիալական, հուզական, մտավոր զարգացման վրա: Ինչպես նշեցինք ծեսի իրագործումը ինքնին խաղ է: Երբ երեխան կատարում է երկրագործի աշխատանք՝ դա ևս խաղ է, որ երեխան խաղում է՝ կրկնօրինակելով հայրիկին, պապիկին, մայրիկին և այլն:Նա փորում է, ջրում, տնկում:Դա արվում է խմբակային, որտեղ երեխան ձեռք է բերում հերթով գործողություն կատարելու, մեկը մյուսին զիջելու կարողություն:
Ամենակարևորը՝ երեխաները հայտնաբերում են, որ մյուսների հետ խաղալն ու աշխատելը հաճելի է: Այսամենը շատ արդյունավետ ազդում է երեխայի սոցիալակն զարգացումն վրա: Ծիսական խաղերը շատ դրական է ազդում նաևերեխայի զգացմունքային զարգացման վրա: Խաղի ժամանակ նրանց մոր դրսևորվում է վախեր(օրինակ՝ ձուն կռվեցնելու ժամանակ կարող է իր ձունկոտրվել), հույսեր (որ ամպայման ինքն է հաղթելու), ուրախություն (հաղթելու դեպքում): Ծիսական խաղը շատ կարևոր ազդեցություն է գործում երեխայի մտավոր զարգացման վրա: Ինչպես գիտենք օրինակ կան ձվախաղեր ու ընկուզախաղեր, որոնք զարգացնում են երեխայի իմացական հմտությունները: Իմացական հմտությունների հարցում մեծ նշանակություն ունի նաև երեխաների հետ կազմակերպած երկրագործի աշխատանքները, ինչի շնորհիվ երեխան ձեռք էբերում գիտելիքներ բնության երևույթների մասին և հրստացնում բառապաշարը նոր բառերով: Այդ խաղերի միջոցով նրանք փորձում են կապեր գտնել լսած տեղեկությունների ու կատարած գործուղությունների միջև, ստեղծագործել ու ավելացնել նորը: Նրանք փորձարկում են այդ ամենը և սովորում փորձի ու սխալի

միջոցով: Ծիսական երգն ու երաժշտությունը մեծ ազդեցություն է գործումերեխայի զարգացման հետևյալ ասպեկտների վրա՝զգացմունքային, սոցիալական, լեզվակ ան: Յուրաքանչյուր մշակույթ ունի սիրո ու. փաղանքշանքի երաժշտական դրսևորման իր ուրույն պարզունակ օրինակները, որոնք երեխաները հեշտորեն կարող են յուրացնել և դրանց միջոցով արտահայտել իրենց զգացմունքները: Երեխաների զգացմունքների վրա շատ դրական է ազդում այն, երբ նրանք տեղեկանում են, թե ովքեր և երբ են կատարել այդ երգերը: Նրանք ավելի սիրով ու ջերմությամբ են կատարում, ինչի միջոցով էլ արտահայտում են իրենց հրճվանքն ու ուրախությունը: Ծիսական երգն ու երաժտությունը զորեղ միջոց է երեխայի սոցիալական զարգացումը խթանելու համար: Երեխաներին մեծ հաճույք են պատճառում ծիսական այն երգերը, որոնք կազմակերպվում են խմբակային և երկխոսության տեսքով: Ծիսական երգերը իրենց մեջ պարունակումեն արարողակարգեր, որոնց միջոցով երեխաները գովում են մեկը մյուսին, նվիրում ծաղիկներ, քաղցրավենիք, ուտելիք և այլն, ինչն էլ երգի և երաժշտության հետ համատեղ էլ ավելի է նպաստում սոցիալական զարգացմանը: Ծիսական երաժշտությունը կարող է զարգացնել երեխայի լեզվական կարողությունները: Մեղեդին հոկում է հիշողությունը ,հետևաբար երեխան կ հիշելով երգի բառերը, զարգացնում է իր բնական խոսքը: Երաժշտությունը զարգացնում է բառապաշարը:Երեխաաները կարող է ցանկանալ հորինել իրենց սեփական երգերը՝ իմացած կամ ծանոթ մեղեդիների օգտագործմամբ, այդպիսովպատմելով իրենց պատմություններն ու արտահայտելով իրենց անհատական զգացողությունները: Քանի որ ազգային ծեսերից շատերը առնչվում են բնության հետ (օրինակ՝ Ծաղկազարդ, Համբարձում և այլն) հիմնականում պետք է կազմակերպվեն բացօթյա միջավայրում:Ինչն էլ իր հերթին նպաստում է երեխայի աճի և զարգացման համար: Երեխայի զարգացման բոլոր ոլորտները, այդ թվում՝ խոսքային և մտավորը, նկատելիորեն առաջադիմում են բացօթյա միջավայրի հետ շփվելու ընթացքում: Երեխայի և բնության հետ ստեղծվում է ներդաշնակ կապ:Ինչպես նաև բացօթյա միջավայրը հզոր միջոց է գեղեցիկն ընկալելու:

Ներկայացրած դրույթները գործնականում կիրառելով համոզվում ենք, որ իրոք ծեսը կարևոր նախապայման ու հարմար միջավայր է երեխայի խոսքի զարգացման, աշխարհընկալման ու հաղորդակցման համար: Նախադպրոցականուսումնական հաստատության սանի համարազգային ծեսի ճանաչման ամենաարդյունավետ ձևը խաղն է, այդպես ավելի տպավորիչ ու հասանելի է, հասկանալի, գործնական: Նախակրթարանում գործունեության հիմնական ձևերը իրականացվումեն խաղի միջոցով: Խաղը զարգացնում է երեխայի

- ուշադրությունը
- հիշողությունը
- երևակայությունը
- ստեղծագործելու կարողությունը
- հաղորդակցման կարողությունը
- շարժողականությունը

Նաև համոզվում ենք, որ ծիսական խաղերը ևս շատ դրական ձևով են ազդում երեխայի խոսքին նպաստող ոլորտների՝ սոցիալական, հուզական ումտավոր զարգացման վրա:

Երբ երեխաները երկագործի աշխատանք էին իրականցնում, շատ պարզ ու հստակ պատկերացում ունեցան, թե ինչպես կարելի է ծառերն ու բույսերը խնամել, ինչպես ցանել ցորենը՝ հողում և բամբակիվրա (ածիկ) զատկի տոնին օգտագործելու համար:Պատկերացրին մարդու և բնության սերտ կապն ուայս ամենը ծիսական միջավայրում: Ըմբռնեցին ծեսի նշանակության կարևորությունը: Հարստացրին իրենց բառապաշար նոր բառերով:
Երեխաները սիրով են սովորում և երգում ծիսական երգերը: Երգի հետ զուգընթաց նաև խաղում են: Սա երեխաների մոտ ձևավորում էորոշակի երաժշտական ճաշակ՝ նրանց մոտեցնելովհայ մշակույթի արմատներին:
Նրանք հեշտորեն կարողանում են յուրացնել ազգային երգն ու պարը՝ դրանց միջոցով արտահայտելով իրենց զգացմունքները:
Թեմատիկ միջոցառումների կողքին այսօր իրենց ուրույն տեղն են զբաղեցնում ազգային տոներն ու միջոցառումները՝ Բարեկենդանը, Զատիկը,Տեառնընդառաջը: Դահլիճը ձեւավորվում է ազգային զարդանախշերով, և նոր շունչ է ստանում ազգային տարազը, որով երեխաները զգեստափոխվում և հոգեպես կապվում են իրենց նախնիների հետ: Այստոները վերածվում են հանդիսության՝ շնորհիվ գեղեցիկ, ուրախ երգերի:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա-Զատիկ

Նպատակ-զարգացնել ազգի մշակույթը,յուրացնելու ստեղծագործելու,հայտնաբերելու,իմացածը կիրառելու հնարավորություն:

Խթանման փուլ-ի՞նչու ենք այն նշում գարնանը և ի՞նչ խորհուրդ ունի այն,ի՞նչու են ցանում ցորենը,Ի՞նչու ենք ձվերը ներկում կարմիր գույնի:

Իմաստի ընկալման փուլ-սովորեցինք բանաստեղծություններ, ասույթներ,պատրաստեցինք ծիսական ուտելիքներ,խաղացինք ձվիկներով խաղեր,այս բոլորին մասնակից դարձնելով ծնողներին և աշխատակիցներին:

Ամփոփում-Այսպիսով ծիսական գործողություն կատարելիս զարգացած երեխաների խոսքը,ներգրավեցինք ծեսի նախապատրաստական աշխատանքներին,ներկեցին,ծեփեցին:

Մեթոդիստի եզրակացություն

Այսպիսով՝թեմատիկ պարապմունքները նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում ամենակարևոր նվաճումներից է բառապաշարի հարստացման,բանավոր խոսքի զարգացման համար շատ կարևոր է մասնակից դարձնել և ծանոթացնել ազգային տոներին,ծեսերին երգին և պարին։Նպատում է անհատականության Ձևավորշանը,զարգացմանը և հաջորդ սերունդներին փոխանցմանը։Դաստիարակի կատարած աղխատանքը լավ էր,ամցումները սահուն գրեթե բոլոր երեխաները ներառված էին պարապմունքին ։

Պարապմունքը համարում եմ ստացված

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով հետազոտության արդյունքում տեսական գրականության արդյունքում եկանք մի շարք եզրահանգումների, ուսումնասիրության և վերլուծության, ծեսերի և ազգային տոների ուսումնասիրման

- Որ ազգային տոների և ծեսերի կազմակերպմաառանձնահատկությունը՝ դա ազգային մշակույթի յուրացումն է, երաժշտական ճաշակի զարգացումն է:

2. Առանձնահատկությունը այն միասնական գործողություններն են, որոնք համախմբում են մարդկանց, նրանց մտքերը, գաղափարները, միասնական գործողությունները:

3. Ազգային տոների և ծեսերի կազմակերպումը ունի մի շարք առանձնահատ-կություններ, որոնք պահանջում են տեխնոլոգիական, երաժշտական, պատմական, լեզվական լրացուցիչ կրթության լուծումներ:

4. Նախադպրոցական տարիքի երեխաների զարգացման և կրթական չափորոշիչների հիմքում ընկած է այն համոզմունքը, որ երեխաների զարգացումը բազմակողմանի է, քանի որ ազգային ոգով զարգացմանը զուգընթաց զարգանում է երեխայի խոսքը և լեզուն, զգացմունքները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. [Հայկական ծեսերը]Ռիմա Ռստկյան
2. [Ազգային տ ոներ] Ա. Սարգսյան
3. [Հայ ժողովրդական տոները] Հ.Խառատյան
4. [Զատիկ] Ռ.Հարոյան
5. [Տոնացույց] Ն.Մովսիսյան
6. https:// https://greeks.am/azgayin-toner/
7. www.armgeo.am/ancient-armenian-holidays/